ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ը

Ռեսպուբլիկայի աշխատավորությունը մեծ շուքով տոնեց նոյեմբերի 7-ը։

Երևանի Լենինի հրապարակում, նոյեմբերի 7-ի առավոտյան ժամը 10-ին տեղի ունեցավ զորահանդես։ Զորահանդեսին հաջորդեց շքերթը։ Մայրաքաղաքի մտավորականությունը, գիտնականներն ու արվեստագետները, ուսանողներն ու աշակերտները, արդյունաբերության աշխատավորները մեծ խանդավառությամբ մասնակցեցին շքերթին։

Ավելի քան 180.000 հոգի մասնակցեց շքերթին, որը տևեց 5 ժամ։

Երեկոյան ռեսպուբլիկայի մայրաքաղաքում տրվեց հրետանային սալյուտ թնդանոթի 21 համազարկով և տեղի ունեցավ հրավառություն։

Ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներում և շրջաններում արժանավայել կերպով տոնվեց նոյեմբերի 7-ը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Նոյեմբերի 28-ին, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական թատրոնում տեղի ունեցավ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Սովետական Հայաստանի 31-րդ տարեդարձին։

Թատրոնի ընդարձակ դահլիճը տոնական տեսք էր ընդունել։

Նախագահության սեղանի մոտ են պետական վարիչներ, կուլտուրայի և գիտության գործիչներ։

Հանդիսավոր նիստը հայտարարվում է բացված։ Թատրոնի կամարների տակ հնչում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնը։

Հանդիսավոր նիստի պատվավոր նախագահության ընտրությունից հետո, Սովետական Հայաստանի 31-րդ տարեդարձի մասին զեկուցումով հանդես է գալիս Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Ս. Կարապետյանը։ Զեկուցողը մանրամասն կանգ է առնում սովետական ժողովրդի հոյակապ հաղթանակների վրա, որոնք ձեռք են բերվել վերջին մեկ տարում։ Ակնառու են հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, գիտության և արվեստի բնագավառում։ Զեկուցողը մեջ է բերում թվեր, որոնք ցույց են տալիս արդյունաբերության, գյուղատնտեսության վերելքը, ժողովրդական կրթության և առողջապահության գործի զգալի բարելավումը։

Սովետական Միության Պետական Հիմնի հանդիսավոր հնչյունների տակ նիստը հայտարարվում է փակված։ Վերջում տեղի է ունենում ճոխ համերգ՝ մասնակցությամբ Օպերայի և Հայֆիլհարմոնիայի ուժերի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1951 թվականի դեկտեմբերի 16-ին տեղի ունեցան Հայկական ՍՍՌ ժողովրդական դատարանների ընտրությունները։

Աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային Սովետների գործադիր կոմիտեներից Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունում ստացված քվեարկության արձանագրությունների հիման վրա պարզվել է, որ Հայկական ՍՍՌ Ժողովրդական դատարանների (ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների) ընտրություններում քվեարկությանը մասնակցել է բոլոր ընտրողների 99,99 տոկոսը։

Ժողովրդական դատավորների թեկնածուների օգտին տրված ձայների թիվը կազմում է քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 99,77 տոկոսը, ժողովրդական ատենակալների թեկնածուների օգտին՝ 99,99 տոկոսը։

Ընտրությունները տեղի են ունեցել բոլոր ընտրական օկրուգներում։

Ընտրված բոլոր ժողովրդական դատավորները և ժողովրդական ատենակալները կոմունիստների և անպարտիականների բլոկի թեկնածուներ են։

Ընտրված ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների թվում կանայք կազմում են 41,3 տոկոսը, Համկ(բ)Պ անդամները և թեկնածուները՝ 54,6 տոկոսը, անպարտիականները 45,4 տոկոսը։

Ընտրություններն անցան աշխատավորների քաղաքական մեծ ակտիվության պայմաններում։

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը Երևանում կազմակերպել է մասսայական դպրոցների դիրեկտորների և ուսումնական մասի վարիչների վերապատրաստման դասընթացներ։

Այդ դասընթացներին մասնակցում են մայրաքաղաքի բոլոր դպրոցների դիրեկտորներն ու ուսումնական մասի վարիչները։ Պարապմունքները հիմնականում նվիրված են մասսայական դպրոցներում ավանդվող առարկաների մեթոդիկային։ Դասընթացներում դասախոսում են Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների լավագույն դասախոսները։

ԳՈՐԻՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ.— Գորիսի քառամյա մանկավարժական ուսումնարանը, որ գոյություն ունի 1927 թվականից, մինչև հիմա տվել է 1.264 շրջանավարտ, որոնք աշխատում են Գորիսի, Սիսիանի, Ղափանի և այլ շրջանների դպրոցներում։ Ուսումնարանի ավելի քան 450 սաներ ստացել են բարձրագույն կրթություն, շատերը սովորում են ասպիրանտուրաներում, իսկ 11 մարդ ստացել են գիտության թեկնածուի կոչում։ Սաներից շատերը դպրոցների վաստակավոր ուսուցիչներ են և պետական ղեկավար աշխատողներ։

Այս տարի ուսումնարանում սովորում է 210 մարդ, որոնց զգալի մասը հարևան շրջաններից է։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖԱԲՐԻԿԱ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ.— Ռեսպուբլիկայի ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներում սկսվել է երիտասարդության ընդունելությունը։

Երևանի № 6 ֆաբրիկա-գործարանային դպրոցը 125 տեղի համար արդեն ստացել է ավելի քան 200 դիմում։ Մեծ թվով դիմումներ են ստացվել նաև Ղափանի լեռնարդյունաբերական դպրոցում։

Դպրոցները լրիվ պատրաստ են նոր ուսումնական տարվան։ Համալրված է դասատուների կազմը, ավարտված է ուսումնական շենքերի և հանրակացարանների նորոգումը։ Սովորողների համար ձեռք են բերվել հագուստեղեն, դասագրքեր, գրենական պիտույքներ։

Ֆաբրիկա-գործարանային դպրոցներում պատրաստվելու են տասը մասնագիտությունների որակյալ բանվորներ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆՈՐ ՋՈԿԱՏ.— Երևանում ավարտվեցին գյուղատնտեսության ղեկավար աշխատողների ուսուցման երկամյա դասընթացներ, որոնց ռեսպուբլիկայի տարբեր շրջաններից մասնակցում էին գյուղատնտեսական բարձրագույն ու միջնակարգ կրթություն ունեցող 83 մասնագետ։

Ունկնդիրները դասընթացներում ուսումնասիրեցին ագրոբիոլոգիայի նորագույն նվաճումները, բնության վերափոխման ծրագիրը, մեխանիզացիայի, բուսաբուծության, անասնաբուծության զարգացման հարցերը և այլն։

Դասախոսություններին զուգընթաց կազմակերպվում էին փորձնական պարապմունքներ, որոնք տեղի էին ունենում Բերիայի շրջանի գյուղերում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գենետիկայի ու սելեկցիայի ինստիտուտում և բուսաբանական այգում։

Բացի տեսական ու փորձնական ուսուցումից, ունկընդիրների համար հաճախակի կազմակերպվել են դրոսապտույտներ դեպի ռեսպուբլիկայի նորակառույցները, արտադրական ձեռնարկությունները։

Ունկնդիրների մեծ մասը դասընթացներն ավարտեց բարձր գնահատականներով։

ԲԺՇԿԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.— Ավարտվեցին ռեսպուբլիկայի սանիտարական-էպիդեմիկ (համաճարակի դեմ պայքարող) կայանների գլխավոր բժիշկների վերապատրաստման մեկամսյա դասընթացները։

Դասընթացների ունկնդիրները դասախոսություններ լսեցին արդյունաբերական, սննդի, հասարակական առողջապահության, էպիդեմոլոգիայի, միկրոբիոլոգիայի, սովետական առողջապահության կազմակերպման հարցերի շուրջը և բժշկագիտության ասպարեզում կատարված նորագույն հայտնագործությունների մասին։

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության առողջապահության, էպիդեմոլոգիայի և միկրոբիոլոգիայի գիտա-հետազոտական ինստիտուտի բաժանմունքներում գործնական աշխատանքի ընթացքում ունկնդիրները ծանոթացան լաբորատորական ստուգումների նորագույն մեթոդների հետ։

ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՆԳԱՄՅԱԿԸ.— Դիլիջանում նշվեց տեղական երաժշտական դպրոցի հինգ տարին։ Այդ առթիվ կայացած հոբելյանական երեկոյին հյուրեր էին եկել նաև Երևանից, Կիրովականից և շրջակա գյուղերից։

Դպրոցի դիրեկտոր Ռ. Ավետիսյանը ներկա գտնվողներին ծանոթացրեց դպրոցի գործունեությանը։

Դիլիջանի երաժշտական դպրոցի ջութակի, թավջութակի և դաշնամուրի դասարաններում սովորում է մոտ 70 երեխա։ Դպրոցն ապահովված է որակյալ դասատուներով, անհրաժեշտ գործիքներով և գրականությամբ։ Դպրոցին կից կազմակերպված է քառաձայն երգեցիկ խումբ, որը հաճախ համերգներ է տալիս բաղարի աշխատավորների համար։

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԿԻՆՈԺԱՊԱՎԵՆՆԵՐ.— Երևանի կինոստուդիայում պատրաստվում է երեք մասից բաղկացած «Սևան» գունավոր տեսարանային կինոֆիլմը։ Նկարն ստեղծվում է ռեժիսորներ Գ. Մելիք-Ավագյանի և Շ. Վաղարշյանի ղեկավարությամբ. երաժշտությունը գրել է ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ, կոմպոզիտոր Ա. Սաթյանը։ Կինոստուդիայում աշխատանք է կատարվում նաև «Մենդարդյունաբերություն» գունավոր դոկումենտալ ֆիլմի վրա։ Արտադրության մեջ է գտնվում «Ակադեմիկոս Համբարձումյան» մեկ մասից բաղկացած դոկումենտալ կենսագրական ֆիլմը։

Այս ֆիլմերն էկրանների վրա կցուցադրվեն մինչև ընթացիկ տարվա վերջը։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Երեք տարի առաջ Գորիս քաղաքում կազմակերպվեց գավառագիտական թանգարան, որը բաղկացած է երեք բաժնից։ «Նախաուևոլուցիոն Զանգեզուրը» բաժնի էքսպոնատները ցուցադրում են Զանգեզուրի աշխատավորության կենցաղը, արտադրության գործիքները, ինչպես նաև հայ ժողովրդի ազատագրական պայքարը իր անկախության համար։

«Սովետական Զանգեզուր» բաժնում ցուցատախտակների միջոցով ցուցադրված են արդյունաբերության, գյուղատնտեսության, արվեստի ու կուլտուրայի նվաճումները։

Հաջորդ բաժնի ցուցափեղկերը այցելուին պատմում են Զանգեզուրի կենդանական ու բուսական աշխարհի մասին։ Բազմաթիվ էքսպոնատներ ցույց են տալիս հանրային անասնաբուծության, այգեգործության, շերամապահության, ծխախոտագործության զարգացումը, պտղատու ծառերի նոր տեսակների արմատավորումը, անտառապատումը, ոռոգման աշխատանքները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության ու տեսության սեկտորն աշխատանք է կատարում ժողովրդական երգերի հավաքման ու գիտական ուսումնասիրության ուղղությամբ։

Սեկտորի գիտական աշխատողներն այս տարի եղել են ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում և գրի են առել հարյուրավոր երգեր ու պարեղանակներ։ Վերջերս սեկտորի գիտական արշավախումբը եղավ Էջմիածնի շրջանում և գրի առավ 140-ից ավելի ժողովրդական ու գուսանական երգեր։

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ.— Լենինականի նկարչական դպրոցում բացվեց կերպարվեստի ցուցահանդես, որտեղ ցուցադրված են նկարչական, քանդակագործական, թատերական ձևավորման և գրաֆիկական աշխատություններ։

Ցուցահանդեսում ներկայացված են նկարիչներ Շ. Սարգսյանի, Հ. Անանիկյանի, Ռ. Սարգսյանի, Հ. Սահակյանի, Ս. Գրից-Գրեշնովիչի, Հ. Զոմյանի, Գ. Կարապետյանի և Յ. Աբրահամյանի աշխատանքները։

Նկարչական բաժնում աչքի են ընկնում Շ. Սարգսյանի «Պատանի բնասերները» մեծադիր յուղանկարը, Հ. Անանիկյանի «Խաղաղության աղավնին» և Շիրակի բնության գեղեցկությունը վերարտադրող բնանկարներից Հ. Զոմյանի «Մեր բակը», «Արևի տակ», «Աշուն», «Տանձենի» և Ռ. Սարգսյանի «Գործարանային թաղամաս», «Էտյուդ», «Զմեռ» գործերը։

Թատերական ձևավորման բաժնում հաջողված գործեր են «Աղբյուրի մոտ» պիեսի բեմադրության ձևավորման Յ. Աբրահամյանի ուրվանկարները և Հ. Սահակյանի «Կալինովայա Ռոշշա» պիեսի ձևավորման ուրվանկարը։

Քանդակագործական բաժնում կան մի շարք հաջող կիսանդրիներ։

Հետաքրքրական են Ա. Իսահակյանի «Ալագյազի մանիներ» պոեմի պատկերազարդումները ինքնուս նկարիչ Գ. Կարապետյանի կատարումով։ Լենինականի հասարակայնությունը մեծ հետաքրքրությամբ է դիտում շնորհալի նկարիչների այս ցուցահանդեսը։

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ.— Առաջիկայում Մոսկվայում բացվելու է 1951 թվականի գեղարվեստական ցուցահանդեսը։ Այդ կապակցությամբ Արվեստի գործերի վարչությունը, Հայաստանի սովետական նկարիչների միության հետ միասին, ընտրել և ցուցադրության համար Միության մայրաքաղաքն են ուղարկել սովետահայ նկարիչների լավագույն գործերը։

Մոսկվա ուղարկված աշխատանքների թվումն են երիտասարդ նկարիչ Շ. Հերթևցյանի, Խ. Եսայանի և Է. Հարությունյանի մի շարք գործերը։

Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսի ժյուրիին են ուղարկված նաև Մ. Սարյանի, Գ. Գյուրջյանի, Թ. Զյորեքչյանի, Գ. Խանջյանի, Է. Իսաբեկյանի, Ե. Սավայանի, Հր. Ռուխկյանի և Լ. Ավետիսյանի մի շարք աշխատանքները։

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵՐԵԿՈ.— Սովետական կերպարվեստի նվաճումները ժողովրդականացնելու նպատակով Հայաստանի Պետական պատկերասրահում Երևանի կերպարվեստի անվանի վարպետները հանդիպում ունեցան Պետական համալսարանի ուսանողների հետ։

Երեկոն ներածական խոսքով բացեց Հայաստանի սովետական կերպարվեստագետների միության նախագահ, ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը։

«Սովետահայ կերպարվեստի նվաճումները» թեմայով զեկուցեց Պետական պատկերասրահի դիրեկտորը, որից հետո իրենց ստեղծագործական աշխատանքների մասին պատմեցին նկարիչ Է. Իսաբեկյանը, ժողովրդական նկարիչ Ա. Սարգսյանը, արվեստի վաստակավոր գործիչ Մ. Աբեղյանը։ Այնուհետև ելույթներ ունեցան Պետական համալսարանի ուսանողներ Վ. Օհանջանյանը, Ն. Բաշինջաղյանը, Լ. Վալեսյանը, որոնք պատմեցին պատկերասրահում կազմակերպված սովետահայ կերպարվեստի ցուցահանդեսից ստացած իրենց տպավորությունները, նշեցին մի շարք կերպարվեստագետների ստեղծագործությունների արժանիքներն ու թերությունները։ Նրանք միաժամանակ կերպարվեստագետներից պահանջեցին ստեղծել ուսանողության, երիտասարդության բազմաբեղուն կյանքին նվիրված գեղարվեստորեն հագեցված ավելի շատ գործեր։ Երեկոն անցավ ջերմ մթնոլորտում։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության ստեղծագործական սեկցիայում լսվեցին և կատարման հանձնարարվեցին Ստալինյան մրցանակի լաուրեատ, կոմպոզիտոր Ալ. Հարությունյանի «Կոնցերտինա»ն՝ դաշնամուրի և նվագախմբի համար, բաղկացած երեք մասից, կոմպոզիտոր Ջրբաշյանի «Կվինտետ»ը՝ երեք մասից, Ադ. Խուդոյանի «Սևան» սիմֆոնիկ պոեմը՝ նվիրված Սևանշինի կառուցողներին։

Շուտով քննարկվելու է կոմպոզիտոր Ալ. Հովհաննիսյանի «Պեպո» օպերան՝ գրված հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի համանուն պիեսի հիման վրա, կոմպոզիտոր Ա. Սաթյանի «Զանգեզուրի լեռներում» սիմֆոնիկ պատկերները նվագախմբի համար՝ հինգ մասից, որտեղ գովերգված է նոր Զանգեզուրը, կոմպոզիտոր Էդ. Միրզոյանի «Սիմֆոնիկ պոեմ»ը՝ նվիրված սովետական ժողովրդի խաղաղ, ստեղծագործական աշխատանքին, կոմպոզիտոր Վ. Արարատյանի «Սիմֆոնիա»ն, Գ. Չեբոտարյանի «Տոնական» սիմֆոնիկ ստեղծագործությունը և այլ գործեր։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Սովետական Հայաստանում ծաղկում է գիտությունը։ Վերջին տարիների ընթացքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներն ու գիտական հիմնարկներն ընդլայնվել են ու զարգացել, աճել են գիտնականների շարքերը, և ներկայումս նրանք ի վիճակի են լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք կապված են ինչպես ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության այժմեական խնդիրների հետ, այնպես էլ գիտության ընդհանուր զարգացման հետ։ Ներկայումս մեր ակադեմիան միավորում է 30 գիտա-հետազոտական հիմնարկություն, որոնցում զբաղված են ավելի քան 650 գիտա-տեխնիկական աշխատակիցներ, այդ թվում՝ 70 դոկտորներ և գիտության 190 թեկնածուներ։

Այս տարի Հայաստանի գիտնականները կատարել են մեծ թվով աշխատանքներ, որոնք լուրջ նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ի. Վ. Եղիազարյանի ղեկավարությամբ հաջողությամբ անց են կացվում Կույբիշևյան հիդրոհանգույցի գործող մեծ մոդելի փորձարկման հետազոտությունները։ Ակադեմիայի Երկրաբանության ինստիտուտի և Շինանյութերի ու կառուցվածքների ինստիտուտի համատեղ արշավախմբի ջոկատներն ուսումնասիրել են նստվածքային երևույթները Վոլգայի աջ ափին, իսկ Ստալինգրադյան հիդրոհանգույցի ջրամբարի կառուցման գոտում հետազոտել և ուսումնասիրել են շինանյութերի հանքավայրերը։

Լայնորեն հայտնի են Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի աշխատանքները, որ ղեկավարում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Այստեղ հաջողությամբ շարունակվում են աստղային միավորումների ուսումնասիրման աշխատանքները։

Լուրջ հաջողությունների է հասել ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորը, որը լուծել է անալիտիկ ֆունկցիաների տեսության մի շարք խնդիրներ։ Արժեքավոր են երիտասարդ գիտնական, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ս. Մերգելյանի աշխատանքները. նա այս տարի ավարտել է իր նոր ուսումնասիրությունը «Կոմպլեքսային բնագավառում հավասարաչափ և լավագույն մոտավորությունների մասին» թեմայով։

Ժողովրդական տնտեսությանն զգալի օգնություն են ցույց տվել երկրաբանական հետազոտությունները, որոնք հնարավորություն են տալիս ընդլայնելու հանքային հարստությունների արդյունահանումը։

Քիմիկոսները, երկրաբանների հետ համատեղ, հայտնաբերել են տեղական հումքի նոր տեսակներ, որի կապակցությամբ ընդլայնվել է ապակու արտադրությունը՝ մասնավորապես էլեկտրալամպերի համար։

Զգալի հաջողություններ են ձեռք բերվել հացահատիկային և գյուղատնտեսական այլ բույսերի նոր բարձր-բերքատու տեսակներ ստանալու, հողերը և բուսական աղբյուրներն ուսումնասիրելու, ճահճացած հողերը յուրացնելու, ռեսպուբլիկայի նախալեռնային և լեռնային շրջաններում պտղատու և խաղողի այգիներ ստեղծելու ասպարեզում։

Մեծ չափով ընդլայնվել են գիտա-հետազոտական աշխատանքները նաև ֆիզիոլոգիայի բնագավառում։

Լուրջ աշխատանք է կատարվել հասարակական գիտությունների բնագավառում։ Այս տարի քննարկումներ և վիճաբանություններ են անցկացվել առավել այժմեական հարցերի շուրջը. այսպես, օրինակ, քննարկվել է հայոց լեզվի տեսության հարցը, վիճաբա-

նություն է անցկացվել նաև փիլիսոփայական մի շարք պրոբլեմների շուրջը։

Լույս են ընծայվել «Հայ ժողովրդի պատմության» առաջին հատորը, «Հայ գրականության պատմության» դասագրքի երկու հատորները։

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ «Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ» աշխատությունը՝ հայերեն և ռուսերեն։

Աշխատությունը, որը կազմել է Հայկական աշխարհագրական ընկերությունը, պարունակում է Սովետական Հայաստանի բնակավայրերի, վարչական շրջանների, երկաթուղային կայարանների, լեռնաշղթաների, լեռների, լեռնանցքների, գետերի, լճերի և արգելանոցների 2.000-ից ավելի ճշտված անուններ։

Աշխատությունը կազմելիս իբրև հիմք ծառայել են «Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը» տեղեկագիրը և Հայկական ՍՍՌ ֆիզիկական-աշխարհագրական անունների ճշտված ցուցակը, որը հաստատվել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից։

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը հրատարակության է պատրաստում ռուս-հայերեն մեծ բառարան։

Նոր բառարանը բաղկացած է լինելու 4 հատորից և պարունակելու է քաղաքական, գրական, գիտական, ռազմական բնույթի մոտ 100.000 բառ։

Ռուսերեն բառերի հայերեն թարգմանության հետ միաժամանակ տրվում են նաև համապատասխան համառոտ բացատրություններ և բառերի գործածության ոճական օրինակներ։

Արդեն կազմվել են բառարանի երեք հատորները և 4-րդ հատորի մի մասը։

Եղած թերությունները մինչև հրապարակելը վերացնելու նպատակով Լեզվի ինստիտուտը լույս է ընծայել բառարանի փորձնական մի պրակ, որն ընդգրկում է А, Б, В տառերով սկսվող բառերի որոշ մասը։ Փորձնական պրակն ուղարկված է լեզվաբանության բնագավառի աշխատողներին բառարանի սկզբունքների, տեխնիկայի և բառարանակազմության այլ հարցերի վերաբերյալ դիտողություններ ու առաջարկություններ կատարելու և Լեզվի ինստիտուտին ներկայացնելու համար։ Առաջիկայում ինստիտուտում տեղի կունենա բառարանի գիտական քննարկումը, որին կմասնակցեն գիտնականներ, լեզվաբաններ, լեզվի դասատուներ, թարգմանիչներ և մտավորականության այլ ներկայացուցիչներ։

Նախատեսված է մեծ բառարանի առաջին հատորը լույս ընծայել 1952 թվականի վերջերին։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Երևանի կաբելի (էլեկտրալարի) գործարանի հողամասում կառուցվել ու շահագործման են հանձնվել 1.200 մետր երկարությամբ ասֆալտապատ ճանապարհներ, որոնց եզրերը կանաչապատված են ծառերով ու ծաղիկներով։ Մինչև այս տարվա վերջը ասֆալտապատվելու է մեկ և կես կիլոմետր երկարությամբ միջգործարանային ճանապարհ։

Գործարանի բանվորների ու ծառայողների մոտ 30 ընտանիքներ նոր բնակարաններ ստացան Բերիայի փողոցի վրա վարդագույն տուֆից կառուցված հինգ հարկանի շենքում։

ՆՈՐ ԽԱՆՈՒԹՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Երևանում բացվեցին մի շարք նոր խանութներ, կրպակներ, ճաշարաններ և առևտրական այլ կետեր։

Ստալինի պողոտայում շահագործման են հանձնվելու երեխաների հագուստեղենի խանութ-տաղավարը, տղամարդկանց ու կանանց կոշկեղենի անհատական պատվերների խանութները, Աբովյանի փողոցում՝ նվերների խանութը, Միկոյանի պողոտայում՝ ճաշարանը, Շահումյանի փողոցում՝ գարեջրի վաճառքի դահլիճը և այլն։

Բնակչության ավելի լավ սպասարկելու նպատակով Երևանդառը ստացել է մթերային 12 ավտոկրպակներ։ Նրանք արդեն գործում են Միկոյանի ռայոնում, Սարիթաղում, քաղաքային 2-րդ շուկայում, երկաթուղային կայարանում և այլ վայրերում։

Այս եռամսյակում Երևանում բացվելու են մոտ 50 նոր խանութներ, կրպակներ, ճաշարաններ, զանազան տաղավարներ, արհեստանոցներ և այլն։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Ավարտվեցին և շահագործման հանձնվեցին դպրոցական երկու նոր շենքեր, որոնցից մեկը՝ Ստալինյան ռայոնի Թամանցիների փողոցում, որտեղ տեղավորվեց № 74 յոթնամյա դպրոցը, մյուսը՝ Ձերժինսկու անվան ռուսական միջնակարգ դպրոցի շենքը՝ Կիրովյան ռայոնի Այգեստանի 9-րդ փողոցում։

Դրանք լուսավոր, գեղեցիկ դասասենյակներով, սպորտային դահլիճներով, աշակերտների դպրոցական ու արտադպրոցական պարապմունքների համար ստեղծված բոլոր հարմարություններով դպրոցական օրինակելի շենքեր են։

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Երևանում ավարտվել են հասարակական և բնակարանային մի շարք նոր շինարարություններ։ Շահագործման են հանձնվում բնակելի բազմահարկ շենքեր։ Մայրաքաղաքի աշխատավորների բազմաթիվ ընտանիքներ ստանում են նոր բնակարաններ։

Այս տարի քաղսովետը և զանազան հիմնարկ-ձեռ-

նարկություններ Երևանում կառուցում են 35 բնակելի շենք։ Այդ շենքերում արդեն շահագործման է հանձնվել 11.000 քառակուսի մետր տարածություն։ Մինչև դեկտեմբերի վերջը շահագործման կհանձնվի ևս 13.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։

ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Լենինի հրապարակում սկսվել են պրոֆմիությունների տան (աշխատանքի պալատի) կառուցման նախապատրաստական աշխատանքները։ Շենքի նախագիծը, որը կազմել են ճարտարապետներ Մ. Գրիգորյանը և Է. Սաֆարյանը, հաստատված է ՀԱՄԿԽ-ի (Համամիութենական արհեստակցական միությունների կենտրոնական խորհրդի) կողմից։

Պրոֆմիությունների տունը բաղկացած է լինելու հինգ հարկից։ Այնտեղ տեղավորվելու են ՀԱՄԽ-ը (Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը) և պրոֆմիությունների ռեսպուբլիկական կոմիտեները։ Շենքն ունենալու է ընդարձակ դահլիճ, պրոֆկաբինետ, գրադարան-ընթերցարան և այլ հարմարություններ։ Այն կլինի մայրաքաղաքի գեղեցիկ շենքերից մեկը և կլրացնի Լենինի հրապարակի ճարտարապետական ձևավորումը Նալբանդյանի և Ամիրյանի անկյունում։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԿԱԼԻՆԻՆՈՅՈՒՄ.— Կալինինոյի շրջանում տարեցտարի ընդարձակվում է առողջապահական և մանկական հիմնարկների ցանցը։

Շրջանային կենտրոնում գործում է նորակառույց հիվանդանոցը, որն ունի լաբորատորիա, ռենտգենյան և այլ կաբինետներ, բուժարան, ծննդատուն։ Շրջանային կենտրոնում և գյուղերում ստեղծվում ու գործում են բազմաթիվ մանկապարտեզներ, մանկամսուրներ և այլ հիմնարկներ։

ԱՐԶՆԻԻ ՍԱՆԱՏՈՐԻԱՅԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ.— Ամեն տարի Արզնիի սանատորիայում բուժվում են սրտա-անոթային համակարգության և հոդերի հիվանդություններ ունեցող աշխատավորները։

Ածխաթթվային հարուստ պարունակություն ունեցող Արզնիի բնական աղբյուրները իրենց բուժիչ հատկություններով արդեն լայնորեն հայտնի են Սովետական Միությունում։

Արևոտ օրերի շատ լինելը և արևային ճառագայթման ուժգնությունը հնարավորություն են ստեղծում Արզնիի առողջարանից օգտվելու տարվա բոլոր ամիսներին։

Վերջին տարիների ընթացքում այստեղ կառուցված բաղնեբուժական ջրավազանների նոր շենքը, ինչպես և հասարակական սպասարկման օժանդակ կառուցումները ստեղծել են սանատորիայի ձմեռային աշխատանքի համար բարենպաստ պայմաններ։ Այս տարի սանատորիան կաշխատի ձմռան բոլոր ամիսների ընթացքում։ Ներկայումս Արզնիում բուժվում են 80-ից ավելի հիվանդներ, իսկ ամբողջ ձմռան շրջանում կբուժվեն մոտ 400 աշխատավորներ։

ՏՐՈԼԵՅԲՈՒՍԻ ՆՈՐ ԳԻԾ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Նոյեմբերի 7-ին, Երևանի Բերիայի և Թամանցիների անվան փողոցներով երթևեկեցին տրոլեյբուսներ։ Կիրովի անվան գործարանի բանվորական ավանը տրոլեյբուսով կապվեց քաղաքի կենտրոնի և ծայրամասերի հետ։ Տրոլեյբուսի նոր գիծը ունի երեք կիլոմետր երկարություն։

ԱՇԽԱՏԱՏԱՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԱԽՏԱՅՈՒՄ.— Էլեկտրական էներգիան լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսության աշխատատար միջոցներում։ Վերին Ախտա և Ֆանտան գյուղերն ունեն էլեկտրաղաց, Քաղսի, Ալափարս, Աթարբեկյան և 8 այլ գյուղեր՝ էլեկտրական սղոցարան։ Ֆանտանում և շրջանային կենտրոնում կազմակերպված է կովերի էլեկտրակիթ։ Էլեկտրական ուժը մեծ չափով օգտագործվում է նաև հացահատիկի կալման, զտման, ոչխարների խուզի և այլ աշխատանքներում։

ԳՅՈՒՂԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՈՒՄՆ ՈՒ ՌԱԴԻՈՖԻԿԱՑՈՒՄԸ.— Վերջին տարիների ընթացքում լուրջ աշխատանք է կատարվել Կալինինոյի շրջանի էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Էլեկտրիֆիկացված են շրջանի 19 գյուղ։ Սարչապետ, Նորաշեն, Կալինինո և Պրիվոլնոյե գյուղերում էլեկտրաէներգիայի ուժով աշխատում են կալսիչներ, սղոցարաններ, ալրաղացներ և այլն։ Շարունակվում է գյուղատնտեսական արտադրության աշխատատար միջոցների էլեկտրիֆիկացումը։

Ներկայումս արագ թափով կառուցվում է Սարատովգէսը։

Ռադիոֆիկացված են Կալինինո, Միխայլովկա, Շահնազար, Պրիվոլնոյե գյուղերը, Լոռու տոհմաբուծական սովխոզը։

ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ՇԱՄՇԱԴԻՆՈՒՄ.— Շամշադինի շրջանում կառուցվում է Ծաղկավանի էլեկտրակայանը, որն ունենալու է 400 կիլովատ-ժամ կարողություն։ Ներկայումս արագ թափով առաջ է տարվում էլեկտրակայանի շինարարությունը, փորվում է ջրանցքը և կառուցվում ամբարտակը։ Էլեկտրակայանը շահագործման կհանձնվի 1952 թվականին։ Նա էներգիա կտա հինգ գյուղերի, որով կավարտվի շրջանի էլեկտրիֆիկացումը։

ԾԱՌԱՏՆԿՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Աշնան ամիսներին Երևանի փողոցներում, զբոսայգիներում ու պուրակներում շարունակվեցին ծառատնկման աշխատանքները։

Արաբկիրի սարալանջում, Բաղրամյանի փողոցում, Մոսկովյան փողոցի կանաչ գոտում, Հաղթանակի զբոսայգում և այլ վայրերում տնկվեցին մոտ 25.000 ծառ ու թուփ։

Եկող գարնանը ծառատնկումն ավելի լայն կերպով ծավալելու համար Երևանի բուսապատման տրեստը Բաթումիից, Սուխումիից և այլ վայրերից փոխադրել է մեծ քանակությամբ մշտադալար ծառերի սերմեր ու կտրոններ։

Տրեստը ձմռան ընթացքում թարմ ծաղիկներ կմատակարարի մայրաքաղաքի բնակչությանը։ Այդ նպատակով տրեստի ջերմատներում ներկայումս աճեցվում են բազմերանգ, բուրումնավետ ծաղիկների մի քանի միլիոն թուփ։

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՋՐՄՈՒՂԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ.— Նոյեմբերի 29-ին գործարկվեց Երևանի երկրորդ ջրմուղը։ Այդ առթիվ Ավանի ձորում տեղի ունեցավ բազմամարդ միտինգ պետական վարիչների ներկայությամբ։ Միտինգը բաց է անում աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի նախագահ Ե. Վարդանյանը, որը շնորհակալություն է հայտնում սովետական կառավարությանը և հայտնում, թե նոր ջրմուղի գործարկումով քաղաքին տրվող ջրի քանակն ավելանում է երկու անգամ, բնակչության յուրաքանչյուր շնչին օրական տրվող ջրի քանակը հասցնելով 200 լիտրի։ Ապա նա բուռն ծափահարությունների տակ մոտենում է ջրաճնշման կամերային և կտրում կապույտ ժապավենը։ Ջրմուղի շինարարության մի խումբ առաջավոր բանվորներ բացում են փակոցները և ջուրը ամենայն ուժով ժայթքում է լայն խողովակից։

ՆՈՐ ՋՐՄՈՒՂ ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿՈՒՄ.— Կրասնոսելսկի շրջանային կենտրոնում գործարկվեց նոր ջրմուղը։ Ջուրը բերված է 7 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շահդաղ լեռան ստորոտի աղբյուրներից։

Ջրմուղի կառուցմանը գործուն մասնակցություն են ցույց տվել Կրասնոսելսկի բնակիչները։

ՆՈՐ ՋՐՄՈՒՂ ԿԱԼԻՆԻՆՈՅՈՒՄ.— Կալինինոյի շրջկենտրոնում կառուցվում է նոր ջրմուղ։ Արդեն 2,5 կիլոմետրի վրա տեղադրվել են ջրատար խողովակներ, թաղամասերում դրվել են ծորակներ։ Ավարտվում են ջրմուղի կառուցման հիմնական աշխատանքները։ Շուտով շրջկենտրոնի աշխատավորները կստանան խմելու մաքուր, սառնորակ ջուր։

ԴԻԼԻՋԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Այս տարի զգալի աշխատանք կատարվեց Դիլիջան քաղաքի բարեկարգման գծով։ Հիմնովին ասֆալտապատվել է Մյասնիկյանի անվան փողոցը, կառուցվել է 300 մետր երկարությամբ հենապատ, ասֆալտակվել են 2-րդ և Հիվանդանոց տանող փողոցները։ Ցանկապատվել են պուրակները։ Բարեկարգվել են 1-ին, 3-րդ և 4-րդ սանատորիաների շրջակա տարածությունները։

Շարունակվում է նոր ջրմուղի և քաղաքային սպասարկման դանոցի կառուցումը։

Այս տարի քաղաքի բարեկարգման համար ծախսվել է կես միլիոն, իսկ սանատորիաների գծով՝ մեկ միլիոն ռուբլի։

Զգալի աշխատանք է կատարվում անհատական բնակարանային շինարարության գծով։ Ընթացիկ տարում կառուցվել են 100-ից ավելի բնակարաններ, որոնց համար բաց է թողնվել կես միլիոն ռուբլուց ավելի վարկ։

ՔԱՐ ՀՂԿՈՂ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ.— Լենինականի մեխանիկական գործարանը յուրացրեց քար հղկող մեքենաների արտադրությունը։ Պատրաստված առաջին մեքենաներն ուղարկվեցին Երևան՝ մայրաքաղաքի շինարարություններում օգտագործելու համար։

Մինչև տարվա վերջը գործարանը կարտադրի մի քանի տասնյակ այդպիսի մեքենա։

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ.— Ռեսպուբլիկայի անընդհատ աճող շինարարական պահանջները բավարարելու նպատակով տարեցտարի ընդլայնվում է շինանյութեր արտադրող ձեռնարկությունների ցանցը։

Վերջերս Երևանում շահագործման հանձնվեց կղմինդրի և աղյուսի արտադրության մեխանիզացված նոր գործարանը, որն ունի հայրենական առաջնակարգ տեխնիկայով զինված սարքավորում։

Այս տարի կղմինդր-աղյուսի նոր գործարան է շահագործման հանձնվել Վեդու շրջանում։

Շինարարական արդյունաբերության միությունը կղմինդր-աղյուսի նոր գործարան է կառուցում Զանգիբասարի շրջանում, որը շուտով շահագործման կհանձնվի։

ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ.— Էջմիածնի շրջանում շրջանային կենտրոնից ոչ հեռու գտնվում է Հայկական ՍՍՌ Մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության թռչնաբուծական ֆաբրիկայի շինարարական հրապարակը։

Շատ ժամանակ չի անցել այն օրվանից, երբ այստեղ եկան շինարարական առաջին բանվորները, բայց արդեն կառուցված են մի շարք արտադրական բաժիններ, բնակելի տներ։ Նորակառույց թռչնաբուծական ֆաբրիկան սպասարկելու է ռեսպուբլիկայի մայրաքաղաքի բնակչությանը, տարեկան տալով մոտ 120 տոննա թռչնամիս, մի քանի միլիոն ձու։ Շինարարական բոլոր տեսակի աշխատանքները նախատեսվում է ավարտել 1953 թվականին։

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

ԱՇՏԱՐԱԿՈՒՄ.— Շրջկենտրոնում կառուցվեցին բանվոր-ծառայողների համար բնակելի երկհարկանի տներ, հասարակական խանութի և հրշեջ խմբի շենքեր։ Կառուցվեց 500 մետր երկարությամբ նոր ճանապարհ։

Վերջին երկու տարիների ընթացքում շրջանի ուսուցիչների համար նոր բնակարաններ են կառուցվել կամ գնվել Կարբի, Ուջան, Արագյուղ, Ոսկեվազ, Աշտարակ, Փարպի և Թալիշ գյուղերում։

Ընդարձակվում է «Արարատ» տրեստի Աշտարակի

գինու գործարանի շինարարությունը։ Այս տարի գործարանը գինիներ է արտադրելու 200.000 դեկալիտրով ավելի, քան անցյալ տարի։

Շահագործման են հանձնվել խմորման, փոխադրման ու տակառների լվացման բաժինները, ջեռուցման սիստեմը և այլն։ Զգալի աշխատանք է կատարվել գործարանի բակն ու շրջապատը բարեկարգելու ուղղությամբ։

ԱԶԻԶԲԵԿՈՎՈՒՄ.— Արագորեն կերպարանափոխվում է Միկոյան գյուղը։ Վերջին տարիների ընթացքում այստեղ կառուցվել է բարեկարգ հրապարակ, հիմնվել է զբոսայգի։ Կառուցվել են պետական հիմնարկների, կինո-թատրոնի, հյուրանոցի և բնակելի բազմաթիվ շենքեր։ Շատին գյուղի մոտից Միկոյան է բերված խմելու սառնորակ ջուր։

Շրջկենտրոնն ունի արտադրական մի շարք կետեր, տեղարդկոմբինատ՝ տրիկոտաժի, կոշիկի, կարի, թիթեղյա իրերի արտադրության բաժիններով, յուղի ու պանրի մեքենայացված գործարան՝ սառցարանով, ավտոնորոգման մեխանիկական արհեստանոց և այլն։

Գետափին կառուցվում է ջրհան կայան, որը կոռոդի մոտ 400 հեկտար տարածություն։ Շրջկենտրոնը ձևավորվում, բարեկարգվում ու կանաչապատվում է նոր հատակագծի համաձայն։

Ազիզբեկովի շրջանում համբավավոր է Ջերմուկ սանատորիան, որը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 2.050 մետր բարձրության վրա։ Նա այժմ դեպի իրեն է ձգում մեր Հայրենիքի տարբեր վայրերից հարյուրավոր մարդկանց։ Միայն այս ամառ Ջերմուկում բուժվել են 3.200 մարդ։ Այստեղ կառուցվել ու շահագործման են հանձնվել հյուրանոցի, դպրոցի, ակումբի և բնակելի շենքեր, ստեղծվել են զբոսավայրեր, ծաղկանոցներ ու պուրակներ։ Արագ վերափոխվում է Ջերմուկի բնությունը։ Կառուցվում են և եկող տարի շահագործման կհանձնվեն բնակելի նոր շենքեր, կլինիկական խոշոր սանատորիա, հանքային ջրերի գործարան, ցեխի ու ջրի բաղնիքների բաժանմունքներ։ Շահագործման է հանձնված «Ջերմուկ» հանքային ջրի գործարանը։ Առաջիկայում կառուցվելու է նոր գործարան 6.000.000 շիշ «Ջերմուկ»ի արտադրողականությամբ։

Ազիզբեկովում հաջողությամբ զարգանում են այգեգործությունը, պտղաբուծությունն ու բանջարաբուծությունը։ Շրջանում այգիների տարածությունն այս տարի ընդարձակվել է 150 հեկտարով։ Ներամապահության զարգացման համար կերի կայուն հիմք ստեղծելու համար հիմնվում են ընդարձակ թթաստաններ։ Հատուկ ուշադրություն է նվիրվում մերձարևադարձային բույսերի մշակությանն ու արմատավորմանը։ Շրջանի մի շարք գյուղերում կատարվել է պիստակի փորձնական ցանք, աճեցվում է նոնենի, նշենի։

Շրջանում էլեկտրիֆիկացված է 25 գյուղ։ Այս գյուղերից մի քանիսը էլեկտրաէներգիա են մատակարարում հարևան գյուղերին։ Գյուղատնտեսական աշխատանքներից շատերն էլեկտրիֆիկացվում են։ Ընդլայնվում է հեռախոսային ցանցը, ռադիոֆիկացվում են գյուղերը։

Շրջանում գործում են 54 դպրոց, որից 48-ը՝ միջնակարգ ու յոթնամյա։ Այս տարի նոր յոթնամյա դպրոցներ բացվեցին Սալլի, Ջերմուկ, Բոլորաբերդ, Ձեյթա գյուղերում։ Շրջանում աշխատում են 480 ուսուցիչ, որոնց զգալի մասն ունի բարձրագույն ու թերի բարձրագույն կրթություն։ Մի շարք գյուղերում ուսուցիչների համար կառուցվել են նոր բնակարաններ։

ԳՈՐԻՍՈՒՄ.— Գեղեցիկ է Գորիս քաղաքը, լայն ու ուղղաձիգ փողոցների եզրերին կառուցված երկհարկանի տները թաղված են պտղատու այգիների մեջ։ Վերջին մի քանի տարում քաղաքն ավելի ընդարձակվել, բարեկարգվել և հարստացել է արտադրական նոր ձեռնարկություններով։ Այստեղ աշխատում են տրիկոտաժի ֆաբրիկան, մեխանիկական գործարանը, արտադրական կոմբինատը, գարեջրի գործարանը, կարի, կոշիկի, սայլաշինական արտելները։

Վերջերս ավարտվեցին երկու փողոցների և կենտրոնական զբոսայգու ձևավորումն ու բարեկարգումը։ Այս տարի ասֆալտապատվել ու սալահատակվել են մոտ 40.000 քառակուսի մետր մայթ ու փողոց, ջրմուղի ցանցն ընդարձակվել է 2,5 կիլոմետրով, տընկվել են մոտ 35.000 պտղատու և դեկորատիվ ծառեր։ Քաղաքի բարեկարգման ու կանաչապատման համար այս տարվա 10 ամսում ծախսվել է 1,2 միլիոն ռուբլի։ Պետության տված երկարատև վարկերով բանվորներն ու ծառայողներն այս տարի կառուցել են 140 բնակարան։

Գորիսն ունի մանկավարժական ուսումնարան, 1 միջնակարգ, 2 յոթնամյա դպրոց, գյուղատնտեսական տեխնիկում, բանվոր երիտասարդության և բույրական-մանկաբարձական դպրոցներ, որտեղ սովորում են ավելի քան 2.600 մարդ։ Այստեղ գործում են մի քանի գրադարան-ընթերցարաններ, կուլտուրայի տուն, շրջանային թատրոն, ուսուցչի տուն, կինո և կուլտուրայի այլ օջախներ։

Ակներգէսի առաջին հերթի շահագործումով, որ տեղի ունեցավ անցած տարի, Գորիս քաղաքը և շրջանի 11 գյուղեր ապահովվեցին էլեկտրական էներգիայով։ Եղած արդյունաբերական ձեռնարկությունները լրիվ կարողությամբ աշխատեցնելու, նորերը կառուցելու և շրջանի գյուղերը լրիվ էլեկտրիֆիկացնելու նպատակով կառուցվում է Ակներգէսի երկրորդ հերթը, որ շահագործման կհանձնվի դեկտեմբեր ամսին։

Վերջին 2—3 տարում շրջանի գյուղերում կառուցվել է 450 բնակարան։ Բարեկարգվել ու հիմնովին կերպարանափոխվել են մի շարք գյուղեր։ Շրջանի յուրաքանչյուր գյուղ ունի միջնակարգ կամ յոթնամյա դպրոց, ակումբ, գրադարան-ընթերցարան, խանութ, բուժկետ, զբոսայգի, բարեկարգ հրապարակներ ու փողոցներ։ Շատ գյուղերում կան խնայդրամարկղի, փոստի բաժանմունքներ, կինո, հյուրանոց ու բաղ-

նիք։ Կոլտնտեսականների բնակարաններում դրված են հազարավոր բարձրախոսներ և ռադիոընդունիչներ։

Ներկայումս շրջանի 23 դպրոցներում սովորում է ավելի քան 6.000 երեխա։ Օրեցօր խտանում են գյուղական մտավորականության շարքերը, գյուղերում աշխատում են մոտ 450 ուսուցիչ, բժիշկ, գյուղատնտես, անասնաբույժ, էլեկտրիկ և այլ մասնագիտության տեր մարդիկ։

ՇԱՄՇԱԴԻՆՈՒՄ.— Տարեցտարի բարեկարգվում և գեղեցիկ տեսք է ընդունում շրջանային կենտրոնը։ Միայն այս տարի շրջկենտրոնի բարեկարգման ու կանաչապատման համար ծախսվել է ավելի քան 100.000 ռուբլի։ Շրջանային սպառողական կոոպերատիվ միությունը շահագործման հանձնեց նորակառույց երկհարկանի շենքը, որի առաջին հարկում գործում է ճաշարանը։ Մինչև տարվա վերջը շահագործման կհանձնվեն ևս մի քանի շենքեր, սկսվել է նոր շենքերի կառուցումը։

Շրջանում գործում է ծխախոտի խմորման գործարանը։ Գործարանի բանվորական ավանը ունի ռադիոհանգույց, ակումբ, բուժկայան, դպրոց, միջգործարանային հեռախոսային կայան և այլն։

Շրջանում կա 24 ակումբ ու գրադարան։ Շրջկենտրոնում կազմակերպվել է նաև մանկական գրադարան։ Գրադարաններն ունեն ավելի քան 50.000 կտոր գիրք։ Այս տարի նրանց հատկացվել է 30.000 ռուբլու գրականություն։

Շրջանում կահույքի ֆաբրիկա կառուցելու նպատակով հատկացված է 2 միլիոն ռուբլի։ Կառուցվելու է նաև պարկետի ֆաբրիկա։

Շրջանի անտառներում փայտահատումը կատարվում է էլեկտրական հարմարանքներով և տախտակը սղոցվում է էլեկտրական ուժով աշխատող սղոցարաններում։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԴԱԼՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ.— Դեկտեմբերի 3-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը շքանշաններ և մեդալներ հանձնեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտա-հետազոտական հիմնարկությունների մի խումբ աշխատողների, որոնք պարգևատրվել են անբասիր և երկարատև աշխատանքի համար։

Լենինի շքանշաններ ստացան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Ջրաէներգետիկ ինստիտուտի դիրեկտոր Ի. Վ. Եղիազարյանը և երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու, Երկրաբանության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Ս. Տ. Տիգրանյանը։

Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան ստացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ագրոքիմիայի լաբորատորիայի դիրեկտոր Գ. Դավթյանը։ «Պատվո նշան» շքանշան ստացավ Ֆիտոպատոլոգիայի և կենդանաբանության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, բիոլոգիական գիտությունների թեկնածու Ն. Ակրամովսկին, գիտության գործին իր մատուցած ծառայության համար։

Այդ օրը Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան ստացավ 8 մարդ, «Պատվո նշան» շքանշան՝ 16, «Աշխատանքային արիության համար» մեդալ՝ 27 և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալ՝ 7 մարդ։

Պարգևատրվածները շնորհակալություն հայտնեցին կառավարությանը՝ գիտության ծաղկման նկատմամբ ցուցաբերվող հոգատարության համար, խոստացան այսուհետև ևս ուժեր չխնայելով աշխատել ի բարօրություն սիրելի Հայրենիքի, հանուն ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման։

Վերջում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը շնորհավորեց պարգևատրվածներին և նրանց հետագա հաջողություններ ցանկացավ հայրենական գիտությունը նոր, ավելի բարձր աստիճանի հասցնելու համար։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ.— Հանրային անասնաբուծության վերելքի և կերահայթայթման գործում 1951 թվականի առաջին կիսամյակում ձեռք բերած հաջողությունների համար ՍՍՌ Միության Գյուղատնտեսության մինիստրության հրամանով պարգևատրվել են Հայկական ՍՍՌ 42 կոլտնտեսություններ։ Կոլտնտեսություններից 14-ը որպես նվեր ստացել են բեռնատար ավտոմեքենաներ, իսկ 28-ը՝ մոտոցիկլետներ։

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1951 թվականի դեկտեմբերի 1-ի Հրամանագրով Հայկական ՍՍՌ միջնակարգ դպրոցների և մանկավարժական ուսումնարանների 68 ուսուցիչներ արժանացել են Հայկական ՍՍՌ դպրոցի վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչմանը։